

յ ի շ ա տ ա կ ե լ 1604—ի Ֆ ր ա ն-
սական և Օսմանեան զաշնագիրը, որով
սկսաւ կերպով մը Ֆրանսայի հովանաւո-
րութիւնը Միջին ու Մերձաւոր Արեւելքի
կաթողիկէութեան վրայ, և 1616ի զաշ-
նագիրը Աւստրիոյ Մաթիաս կայսեր և Ահ-
մէտ Ա. Սուլթանին միջև:

Այս զաշնագրերը՝ որոնք յետագային
կրկնուեցան պարբերաբար (6), թոյլ կու-
տային եւրոպացիներուն բնակելու Օսմանե-
ան երկիրներու մէջ իրենց յատուկ կրօն-
քով և սովորոյթներով, դատուելու՝ իրենց
հիւպատոսներէն, երբ իրարու հետ խնդիր
ունենային. սակայն երբ տեղացիներու
հետ էր իրենց վէճը, տեղական ատեանին
առջև կը դատուէին, ի ներկայութեան հիւ-
պատոսական պաշտօնեային: Զօրութեամբ
ըր այս զաշնագրերուն, եւրոպացիները
կ'ունենային նաև աւելի մեծ առանձնաշը-
նորհութիւն մը. իրենց բնակարանները
անբռնաբարելի կը նկատուէին (7):

Այս առաջին զաշնագրերը թէպէտ չեն
խօսիր եւրոպացի առաքեալներու քարո-
զութեանց մասին, սակայն քարոզիչները

(6) Hofmann Giorgio, *Il Vicariato Apostolico di Costantinopoli*, Roma, p. 17—18:

(7) Gatteschi Domenico, *Manuale di diritto pubblico e privato ottomano*, Alessandria di Egitto, 1865, pp. XXV—XXVI: